

Ամփոփելով՝ կարելի պնդել, որ 2001-2010թթ.-ին ապրանքների արտահանումը ՀՀ-ում ենթարկվել է ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական դիվերսիֆիկացիայի, սակայն այն տեղի է ունեցել հիմնականում հանքահումքային ռեսուրսների և ռեսուրսների վրա հիմնված տեխնոլոգիայով ապրանքախմբերի աճի բարձր տեմպերի հաշվին: Ապրանքների արտահանման ծավալների աճի վրա հորիզոնական դիվերսիֆիկացիան մոտ երկու անգամ ավելի մեծ ազդեցություն է ունեցել, քան ուղղահայաց դիվերսիֆիկացիան:

ДИВЕРСИФИКАЦИЯ ЭКСПОРТА ТОВАРОВ В РА

С. А. ТАДЕВОСЯН

Начиная со второй половины 20-го века международная специализация стала одним из основных факторов роста экспорта мировой экономики. Но объемы роста экспорта, которые не комбинируются с диверсификацией экспорта, могут иметь краткосрочный характер. В статье рассматриваются проблемы экспорта продуктов, а также влияние вертикальной и горизонтальной диверсификации на рост экспорта продуктов РА 2001г. по 2010 г.

COMMODITY EXPORT DIVERSIFICATION IN THE RA

S. A. TADEVOSYAN

International specialization has been one of key drivers of the world economic development since second half of the 20th century. But export growth without export diversification might have short-term character. In this paper are discussed problems of the commodity export structure and the influence of the vertical and horizontal diversification on the commodity export growth in the RA between 2001-2010.

ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ա. Ս. ԲԱԴԱԼՅԱՆ
ԳՊՀ լաբորանտ

Շուկայական տնտեսության պայմաններում, որպեսզի տնտեսվարող սուբյեկտները կարողանան դիմակայել սուր մրցակցությանը և պահպանեն իրենց դիրքը շուկայում, անհրաժեշտ է ապահովել կայուն ֆինանսական դրություն: Սակայն շուկայական տատանումների ազդեցության հետևանքով հնարավոր է, որ կազմակերպությունները գտնվեն ֆինանսական անկայուն վիճակում, քանի որ նրանք չեն կարողանում ժամանակին ապահովել հարկային, մաքսային և

հաստատագրված պարտքերի վճարումները, մարել կրեդիտորական պարտքերը և այլ վճարները, ուստի կարող են գտնվել սնանկացման եզրին:

Տնտեսական պրակտիկայում սնանկացման պայմանները դիտարկվում են երկու տեսանկյունով՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ պատճառները կապված են ֆինանսական, դրամական, հարկային համակարգերի անկատարության և դրամական միջոցների արժեզրկման բարձր մակարդակի հետ:

Սուբյեկտիվ պատճառները կապված են տնտեսվարող սուբյեկտի ոչ ճիշտ կառավարման աշխատանքների հետ:

«Ձեռնարկությունների ֆինանսական սնանկացման մասին» ՀՀ օրենքի համաձայն, ֆինանսական սնանկացումը տնտեսվարող սուբյեկտի անվճարունակությունն է նրա ֆինանսատնտեսական հետագա գործունեության շարունակման առումով:¹ Այսինքն՝ կազմակերպությունն այդ պայմաններում չի կարողանում ապահովել պարտադիր վճարումների իրականացում՝ կապված պետական բյուջեին տրվող հարկատեսակների ու հաստատագրված վարկերի, աշխատողների հասանելիք աշխատավարձի և կենսաթոշակային հիմնադրամների վճարումների ու կրեդիտորական մարումների հետ: Կազմակերպությունների սնանկացման առաջնային հատկանիշներից է նաև ընթացիկ վճարումներ կատարելու անկարողությունը, այսինքն, երբ ի վիճակի չէ ժամանակին ապահովելու պարտատերերի վճարումները:

Եթե ֆինանսական սնանկացման եզրին գտնվող կազմակերպությունը ցանկանում է խուսափել լուծարումից, ապա պարտավոր է ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր՝ հիմք ընդունելով «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտատերերի պահանջների բավարարման նպատակով իրականացվող պարտապանի (տնտեսվարող սուբյեկտի) ցանկացած վերակազմավորումը, որի արդյունքում պարտապանի ծրագիրը ներառում է իրականացվող միջոցառումների ուղղությունները՝ տեխնիկատնտեսական հիմնավորումով և տնտեսվարող սուբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության մասին տեղեկատվական արդյունքով:

Ֆինանսական առողջացման ծրագիրը նաև պետք է ներառի՝

1. ապահովված, չապահովված և այլ խմբերի պարտատերերին կատարելիք վճարումների կարգը, ժամկետները և չափը, նրանց պահանջների դիմաց փոխհատուցումների կարգը,

2. տնտեսվարող սուբյեկտներին (պարտապանին) պարտավորություններից ազատելու, դրանք հետաձգելու կամ վերաձևակերպելու կարգը և չափը,

3. տնտեսվարող սուբյեկտների (պարտապանի) վճարունակությունը վերականգնելու համար նախատեսված միջոցառումների բովանդակությունը և իրականացման (կազմակերպչական, կառուցվածքային, իրավաբանական, ֆինան-

¹ ՀՀ օրենքը «Ձեռնարկությունների ֆինանսական սնանկացման մասին», Երևան, 1995, էջ 8:

սական, տեխնիկական և աշխատանքային) ժամկետները,

4. պարտապանին պատկանող գույքի վաճառքի կարգը և դրանցից ստացվելիք եկամուտների օգտագործումը նրա գործունեության շարունակման դեպքում՝ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունների ավելացման հիմնավորումները հաշվի առնելով,

5. այդ ծրագրի կատարման համար անհրաժեշտ ղեկավարի, մասնագետների վարձատրության ու վարչական փոխհատուցման կարգը և չափանիշը:

Կազմակերպության ֆինանսական առողջացման գծով միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով խիստ անհրաժեշտ է գործարարության (բիզնես) պլանի կազմումը՝ նախօրոք մշակված մեթոդական ցուցանիշների հիման վրա: Գործարարության պլանը համարվում է ամփոփ պաշտոնական փաստաթուղթ: Նրա կազմման համար անհրաժեշտ է տվյալ սուբյեկտի նկատմամբ իրականացնել մանրակրկիտ ուսումնասիրություն և հավաքել բավականաչափ հավաստի տեղեկատվություն: Միաժամանակ, գործարարության պլանի ծավալը՝ կապված կազմակերպության զարգացման կոնկրետ նպատակների ու խնդիրների հետ, կարող է փոփոխվել, ուստի նպատակահարմար է ունենալ գործարարության մի քանի տարբերակ:

Առաջին տարբերակը կազմակերպության անցյալ, ներկա և ապագա գործունեության փոխկապակցված նպատակների, խնդիրների ամբողջականությունն է, որը ներկայացվում է պաշտոնական փաստաթղթերի ձևով: Կազմակերպությանը և նրա հետ որոշակի գործունեություն իրականացնող գործընկերներին, ներդրողներին և բաժնետերերին այն անհրաժեշտ է՝ ընդհանուր նպատակները պարզաբանելու և նրա կիրառման արդյունավետությունը հիմնավորելու համար:

Երկրորդ տարբերակը կազմակերպության ղեկավարի, գործունեության իրականացման ծրագիրը մշակողների և խորհրդատուների խմբի համար ամենօրյա մի փաստաթուղթ է, որում ներառվում է աշխատանքների հաջորդական կատարման և տեղեկատվության ամբողջական նյութը: Այս տարբերակը կրում է «Աշխատանքային գործարարության պլան» անվանումը և հնարավորություն է տալիս ավելի խոր հասկանալ առաջին տարբերակի կարևորությունը, նախապես ճանաչել և գնահատել գործունեության իրականացման ռիսկի երկու հիմնական տեսակները՝ ներքին (վերահսկելու հնարավորությունը) և արտաքին (կապված տնտեսական համակարգի և օրենսդրական դաշտի հետ):

Չարկ է նշել, որ գործարարական պլանը նախաներդրումային փուլի անբաժանելի մասն է՝ հատկապես տնտեսվարման նոր պայմանների փուլում գտնվող երկրների համար: Այդ պլանն արժեքավոր փաստաթուղթ է տնտեսվարող սուբյեկտների համար՝ նոր գործունեություն իրականացնելու կամ սնանկացումից խուսափելու համար:

Թեև գործարարության պլանն «ազատ ստեղծագործության» ամփոփ փաստաթուղթ է,² այնուհանդերձ դրան ներկայացվում են որոշակի պահանջներ: Պլանում պետք է արտահայտված լինեն՝

- ըստ տեսականու (ասորտիմենտի) թողարկվող արտադրանքի գների մակարդակը և դրանց փոփոխությունը,
- սպառողների տեսակը և դրանց գործունեության մակարդակը,

² Գործարարության պլան (մեթոդական ձեռնարկ), Երևան, 1999, էջ 6:

- շուկայի աշխարհագրական դիրքը,
- մրցունակության վերլուծությունը,
- ներկայացվող արտադրական ծրագիրը և շրջանառության ծավալի, ինքնարժեքի, շահույթի ու շահութաբերության տեսակների հաշվարկները,
- շուկայավարության և կազմակերպման պլանը (զովագոյային աշխատանքների իրականացում, նորամուծություններին ծանոթանալու նպատակով մասնագետների համար դասընթացների կազմակերպում և այլն),

- ներդրումային ռիսկը,
- ֆինանսական պլանը:

Գործարարության պլանը կազմվում է հատուկ մշակված ձևով, որի առաջին բաժնում տեղեկություններ են տրվում սնանկացման ենթակա տնտեսվարող սուբյեկտի ընդհանուր բնութագրի մասին:

Երկրորդ բաժնում տրվում են ֆինանսական առողջացման ծրագրի մասին համառոտ տեղեկություններ, որոնք պետք է հնարավորություն ստեղծեն վերականգնելու տնտեսվարող սուբյեկտների վճարունակությունը և դրանով իսկ ապահովեն արդյունավետ գործունեությունը:

Գործարարության պլանի 3-րդ բաժինը վերաբերում է տնտեսվարող սուբյեկտի ֆինանսական դրության վերլուծությանը և միաժամանակ այն պատճառներին, որոնք նպաստել են նրա անվճարունակությանը:

Պլանի 4-րդ բաժնում առաջարկվում են վճարունակության վերականգնման գծով միջոցառումների անվանացանկը և տնտեսվարող սուբյեկտի տնտեսական գործունեության արդյունավետության ապահովագրման համար մեթոդական ցուցումներ: Դրանք ներկայացվում են աղյուսակի տեսքով՝ որպես գործարարության պլանի հավելվածներից մեկը:

Գործարարության պլանի 5-րդ բաժինը վերաբերվում է շուկայի ուսումնասիրությանն ու մրցակցությանը, որտեղ շուկան բնութագրվում է տարբեր տեսանկյուններից, այդ թվում՝

- շուկայի մուտքի և ելքի արգելքները (օրենսդրական արգելքները, մեծածավալ ներդրումներ, բարդ տեխնոլոգիաներ),
- շուկայի տարողությունը և իրավիճակային շահավետության աստիճանը,
- շուկայում արտադրանքի իրացման գծով գործող և ենթադրվող գները,
- շուկայի կարգավիճակը (մրցակցային, մենաշնորհային և այլն),
- շուկայում արտադրողների, մատակարարների, սպառողների ազդեցությունը,

● շուկան բնութագրող որակական և քանակական այլ ցուցանիշների ազդեցությունը:

Գործարարության պլանի 6-րդ բաժինը ներառում է տնտեսվարող սուբյեկտի գործունեությունը շուկայավարության ոլորտում: Ժամանակակից շուկայավարությունը շուկայի ուսումնասիրման, պահանջարկի ձևավորման և խթանման, արտադրական գործընթացների բոլոր փուլերի վրա շուկայական գործոնների հաշվառման, ապրանքները մինչև վերջին սպառողներին հատկացնելու, ապրանքների այդ շարժը կարգավորելու, արտադրության և շրջանառության ֆինանսական ապահովման, գնագոյացման, վերահսկողության, զովագրի և միջազգային գործունեության համալիր միջոցառումներն են: Ուստի այս բաժնում

անհրաժեշտ է նշել շուկայավարության հիմնական ուղղությունները:

Գործարարության պլանի 7-րդ բաժինը վերաբերվում է արտադրական ծրագրի մշակման կարգին, որն անվանվում է «Արտադրության պլան»: Վերջինիս մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է տնտեսվարող սուբյեկտի տնտեսական գործունեության ապահովման և ռիսկայնության նվազեցման հետ:

Գործարարության պլանն ավարտվում է 8-րդ բաժնով, որտեղ ամփոփվում են նախորդ բաժիններում կատարված վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքները, այն անվանվում է «Ֆինանսական պլան»: Այս բաժինն ամբողջական տեսքով ներառում է ֆինանսական մի շարք փաստաթղթեր՝

- եկամուտների և ծախսերի ամփոփ հաշվեկշիռը (եկամուտները, ծախսերը, համախառն շահույթը, իրացումից շահույթը, հարկային վճարումները, զուտ շահույթը),

- դրամական մուտքերը և ծախսերը,

- ֆինանսական պլանը՝ ըստ աղբյուրների (սեփական ֆինանսավորման միջոցներ, վարկեր, ներդրումներ), դրամական միջոցների օգտագործումը:

Հարկ է նշել, որ ֆինանսական առողջացման գործընթացում կարևոր նշանակություն ունի նաև տնտեսական ռիսկի նվազումը:

Այսպիսով, որպեսզի տնտեսվարող սուբյեկտները կարողանան ապահովել ֆինանսական դրություն, անհրաժեշտ է մշակել ֆինանսական առողջացման ռազմավարություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենքը «Ձեռնարկությունների ֆինանսական սնանկացման մասին», Երևան, 1995:
2. Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 2, 20 փետվարի, 1997:
3. Գործարարության պլան (մեթոդական ձեռնարկ), Երևան, 1999:
4. **Քայադյան Ա. Գ.** Տնտեսվարող սուբյեկտների սնանկացման և ռիսկերի գնահատման մեթոդիկան, Երևան, 2001:
5. **Քայադյան Ա. Գ.** Տնտեսվարող սուբյեկտների գործունեության ֆինանսական վերլուծության անհրաժեշտությունը, Երևան, 1999:
6. **Берлян С. И.** Теория финансов (учебное пособие), М., 2001.
7. **Дьяль С. В.** Финансовый анализ: теория и практика; учебное пособие, М., 2004.

ПРОБЛЕМЫ ФИНАНСОВОГО ОЗДОРОВЛЕНИЯ НЕПЛАТЕЖЕСПОСОБНЫХ ОРГАНИЗАЦИЙ В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

А. С. БАДАЛЯН

В работе представлены задачи финансового оздоровления субъектов экономики в современных условиях, в связи с чем предлагается стратегическая программа.

**THE ISSUES OF FINANCIAL RECOVERY OF INSOLVENT ORGANIZATIONS
IN MODERN CONDITIONS SUMMARY**

A. S. BADALYAN

The issues of the recovery of economic entities in modern conditions are discussed in the work and for that reason the strategic programme is proposed.

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ա. Ս. ՍԱՐԿՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու,

ԳՊՀ դասախոս

Ա. Ա. ՄՆԵՅԱՆ

*ԳՊՀ մագիստրատուրայի հաշվապահական հաշվառում բաժնի
1-ին կուրսի ուսանողուհի*

Մինչ միասնական միջազգային ստանդարտների ընդունումը՝ ցանկացած երկրում ընկերությունները ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում էին այդ երկրում գոյություն ունեցող կանոններին համապատասխան: Արդյունքում նույն ընկերությունը՝ համաձայն ֆինհաշվետվության, տարբեր երկրներում ամրագրված կանոնների համաձայն, կարող է ինչպես շահութաբեր, այնպես էլ վնասաբեր լինել:

Հայկական ստանդարտները ոչ միայն տարբերվում էին համապատասխան միջազգայիններից, այլև բազմաթիվ նոր ֆինասական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից (այսուհետ՝ ՖՀՄՍ), որոնք ամրագրված չէին հայկական օրենսդրության մեջ: Միջազգային ստանդարտներին համապատասխանեցման անհնարինությունը բացասաբար անդրադարձավ բազմաթիվ հայկական ընկերությունների վրա: Միջազգային ընկերությունների դուստր ձեռնարկությունները ստիպված էին լրացնել ֆինհաշվետվության երկու ցանկ՝ մեկը տեղական կարիքների համար՝ հայկական ստանդարտներին համապատասխան, երկրորդը՝ հետևելով ՖՀՄՍ-ին՝ հիմնական ընկերության համար: Այլ բախվել էին նրան, որ հնարավոր չէր ներգրավել արտերկրյա ներդրումներ, քանի դեռ իրենց հաշվետվությունը չի համապատասխանում միջազգային նորմերին:

Ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտները պարտադիր դարձան բոլոր ընկերությունների համար, որոնք գրանցված էին Եվրամիությունում 2005 թվականից: Այսօր այդ ստանդարտներն ընդունած երկրների թիվը գերազանցում է 100-ը [4]: 2009 թվականին 20 ինդուստրիալ երկրների խումբը կոչ արեց ստանդարտ մշակողներին կրկնապատկել ջանքերը՝ հաշվապահական ստանդարտների նույնացման աշխատանքը լիովին ավարտելու համար: Միա-